**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

17 մարտի 2026թ. թիվ 259

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա. Թումանյանի 2026 թվականի մարտի 16-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ   եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին և գլխավոր մասնագետ Արտյոմ Շահվերդյանին ս/թ մարտի 18-ին գործուղել Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայր՝ գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերը լուսաբանելու համար:

2. Գործուղումն իրականացնել «ВАЗ 21154, 2012թ.» մակնիշի 610 СР 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

**3.** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին և գլխավոր մասնագետ Արտյոմ Շահվերդյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

3/17/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. մարտի 17
ք.Վանաձոր